Երեխաները զվարճանում են

Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության միջազգային օրն է: Այդ առիթով ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմը ուրախ ժամանց էր կազմակերպել համակարգի ինստիտուտների աշխատակիցների երեխաների համար «Կավճով նկարում ենք ասֆալտի վրա» վերնագրով: Միջոցառմանը մասնակցում էր մոտ 130 երեխա: Երեխաներին զվարճացնելու համար հրավիրված ածպարարը մոտ մեկ ժամ կատարում էր հնարքներ երեխաների մասնակցությամբ:

Երեխաները մեծ բավականություն ստացան ածպարարի ներկայությունից, այնուհետև խմբերով գնացին դիտելու Երկրաբանության ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի ցուցանմուշները, դիտեցին ֆիլմ երկրի առաջացման, մամոնտների մասին: Վերջում երեխաները ստացան քաղցրավենիքով լի տոպրակ:

Միացյալ արհկոմն իր շնորհակալությունն է հայտնում ակադեմիայի ղեկավարությանը և Երկրաբանության ինստիտուտի տնօրինությանը՝ միջոցառումը կազմակերպելու հարցում աջակցելու համար:

Կիմա ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմի նախագահ